

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ /ՄՈՂՈՒԼ 1/**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ԲՆԱԳԻՏԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՂՈՒԼ	ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ /ՄՈՂՈՒԼ 1/
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՎ ԴԱՄԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1307B3/07.1, 2 մոդուլ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս 1-ին կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու օրգանիզմի գործառնությունների հիմնական դրույթների, համակարգային կազմակերպման սկզբունքների, տարբեր համակարգերի ֆունկցիոնալ առանձնահատկությունների հետ, որի արդյունքում գիտելիքներ կձևավորվեն ֆիզիոլոգիական ֆունկցիաների կարգավորման մեխանիզմների, օրգանիզմի ներքին միջավայրի կայունությունը պահպանող և համապատասխան վարքագիծը ապահովող կարգավորիչ համակարգերի ու մեխանիզմների փոխազդեցության մասին:</p>
ԿՐԹԱԿԱՆ ԿԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<ul style="list-style-type: none"> • ԳԻՏԵԼԻՔ Բնորոշել, նկարագրել մարդու օրգան, օրգան-համակարգերի՝ մարսողական, սիրտ-անոթային, արտազատիչ, ներզատիչ, նյարդային, շարժողական, գործառնության և կառուցվածքի առանձնահատկությունները: Բացատրել, դասակարգել նյութափոխանակության կարգավորման սկզբունքները, մարդու օրգանիզմի ֆիզիոլոգիական յուրահատկությունները, հոմեոստազի ապահովման կարգավորման մեխանիզմները, բարձրագույն նյարդային գործունեության հիմքերը, հոգեկան գործընթացների և վիճակների մեխանիզմները: • ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Օգտվել փորձարարական նյութից, ճիշտ մեկնաբանել ուսումնասիրվող նյութերը: Որոշել անհատական ֆունկցիոնալ ցուցանիշները: Իրականացնել փորձեր, գնահատել անհատական ֆունկցիոնալ ցուցանիշները և մեկնաբանել նրանց արդյունքները: • ՀՄՏՈՒԹՅՈՒՆ Տիրապետել լաբորատոր կենդանիների հետ փորձարարական աշխատանքի, լուսային մանրադիտարկման մեթոդներին, ստացված տվյալների մշակման մեթոդիկային: Նախընտրել օրգանիզմի հիմնական համակարգերի վիճակի գնահատման էլեկտրոֆիզիոլոգիական, ֆունկցիոնալ-ախտորոշիչ ժամանակակից մեթոդները:
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ	<ul style="list-style-type: none"> • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 3 • ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ - 48 • ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 24 • ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 16 • ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 4 • ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 4 • ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 3

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախնական գիտելիքներ մարդու օրգանիզմի անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասին՝ ավագ դպրոցի չափորոշիչներին համապատասխան:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դասախոսություն, զրույց, խմբային հետազոտություն, քննարկում, ինքնուրույն և խմբային աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Մարդու ֆիզիոլոգիայի առարկան, խնդիրները, բաժինները և մեթոդները: Հասկացություն հոմեոստազի մասին:
- Արյան ֆիզիոլոգիա
Արյան ծավալը, բաղադրությունը, արյան պլազմայի ֆիզիկաքիմիական հատկությունները:
Արյան ձևավոր տարրեր՝ էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, թրոմբոցիտներ:
Արյան խմբերը, ռեզուս գործոն:
Արյան մակարդում, մակարդիչ և հակամակարդիչ գործոններ:
Արյունաստեղծում և նյարդահումորալ կարգավորում:
- Սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիա
Սրտամկանի կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկությունները:
Սրտի ավտոմատիզմը:
Սրտի էլեկտրամեխանիկական, ձայնային և հնչունային մեխանիզմները:
Սրտի գործունեության ռեֆլեքսային կանոնավորումը:
Սիրտ-անոթային համակարգի նյարդահումորալ կարգավորումը:
- Շնչառության ֆիզիոլոգիա
Ներշնչման և արտաշնչման մեխանիզմը:
Գազափոխանակությունը թոքերում:
Գազերի փոխադրումը արյան միջոցով:
Շնչառության նյարդահումորալ կարգավորումը:
- Մարսողության ֆիզիոլոգիա
Մարսողությունը բերանի խոռոչում:
Մարսողությունը ստամոքսում:
Մարսողությունը բարակ աղիքում:
Լյարդի դերը մարսողության մեջ:
Մարսողությունը հաստ աղիքում:
Ներծծում, ներծծման մեխանիզմը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Гальперин С. И. „Физиология человека и животных” М., <<Высш. Школа>> 1987, стр 70-90, 270-297
 2. Դ.Ն.Խուրավերդյան, Վ.Բ.Ֆանարջյան Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ, էջեր 292-330, 330-349, 448-478
 3. Савченков Ю. И. „Нормальная физиология человека” Ростов н/Д 2007 г, стр 303-357
 4. Покровский В.М. „Физиология человека” Москва. 2003г

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Агаджанян Н.А. „Физиология человека” Москва 2003 г
 2. Б.И.Ткаченко. „Основы физиологии человека” 1994г
 3. Г.И.Косицкий, Е.Б.Бабский „Физиология человека” Москва: Медицина 1985г, стр 374-383, 396-403

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ստուգողական աշխատանք, անհատական աշխատանք
Նախատեսված է ընթացիկ գրավոր ստուգում և անհատական աշխատանք՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Ընթացիկ գրավոր ստուգման հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ 30, 30, 20, 20 միավորային արժեքով: Ամփոփիչ ստուգումը գրավոր է 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ 30, 30, 20, 20 միավորային արժեքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱՊԻՉՆԵՐ ԵՎ
ԿՇԻՌ

Բաղադրիչ 1- 10%(հաճախումներ)
 Բաղադրիչ 2 - 10%(ակտիվություն)
 Բաղադրիչ 3 - 20%(ընթացիկ գրավոր ստուգում)
 Բաղադրիչ 4 - 20% (անհատական աշխատանք)
 Բաղադրիչ 5 - 40%(ամփոփիչ գրավոր ստուգում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տարային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

ՈՒՍԱՆՈՂԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

կրեդիտ/կրեդիտ ժամ- 3/90

Հ/Հ	Թ Ե Մ Ա	Լսարանային ժամեր				Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		դրսվելուստովոտուր	գործնական	լաբորատոր	սեմինար		
1.	Ներածություն: Մարդու ֆիզիոլոգիայի առարկան, բաժինները, մեթոդները: Հասկացություն հումեոստազի մասին:	2				2	4
2.	Արյան ֆիզիոլոգիա: Արյան ֆունկցիաները, ծավալն ու բաղադրությունը, պլազմայի բաղադրությունը և հատկությունները:	2				2	4
3.	Ֆիզիոլոգիայի լաբորատորիայի աշխատանքի կանոնները:		2				2
4.	Արյան պլազմայի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրումը:		2			2	4
5.	Արյան ձևավոր տարրերը՝ էրիթրոցիտներ, թրոմբոցիտներ, լեյկոցիտներ:	2				2	4
6.	Արյան խմբեր, մակարդում, արյունաստեղծում Արյան մակարդման փուլերը, մակարդիչ և հակամակարդիչ գործոններ, արյան խմբեր և ռեզուս գործոն: արյունաստեղծում:	2				2	4
7.	Արյան խմբերը և ռեզուս գործոն:			2			2
8.	Արյան ձևավոր տարրերը:				2		2
9.	Արյան ձևավոր տարրերի ստեղծման և քայքայման մեխանիզմները, ուղղությունները կարգավորիչ գործոնները: Էրիթրոպոեզի, լեյկոպոեզի, թրոմբոցիտոպոեզի կարգավորումը:		2			2	4
10.	Միրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիա: Սրտամկանի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հաղորդակից համակարգ:	2				2	4
11.	Սրտի ինքնավարությունը, նյութափոխանակությունը սրտամկանում, էլեկտրամեխանիկական դրսևորումները:	2				2	4
12.	Սրտի ձայնային մեխանիկական դրսևորումները և հնչյունները:			2			2
13.	Սրտի գործունեության ուսումնասիրման մեթոդները:		2			1	3
14.	Միրտ-անոթային համակարգի նյարդահումորալ կարգավորումը: Սրտի գործունեության նյարդային, ռեֆլեքսային և հումորալ կարգավորում:	2				2	4
15.	Շնչառության ֆիզիոլոգիա: Շնչառության ձևերը, շնչառության մեխանիզմը: Թոքային ծավալներ:	2				3	5
16.	Գազափոխանակության առանձնահատկությունները թոքերում, թոքաբշտերում		2			2	4

17.	Արտաքին շնչառության գնահատման մեթոդները:		2			1	3
18.	Գազերի փոխադրումը, շնչառության Նյարդահունորալ կարգավորումը: Շնչառական շարժումների նյարդային կարգավորում, քիմիական ընկալիչների դերը շնչառության կարգավորման գործում:	2				2	4
19.	Մարսողության ֆիզիոլոգիա: Մարսողական ուղու ֆունկցիաները, մարսողության ձևերը: Մարսողությունը բերանի խոռոչում:	2				2	4
20.	Շնչառության կենսամեխանիկա, գազերի փոխադրման մեխանիզմը:				2		2
21.	Մարսողությունը ստամոքսում: Ստամոքսի հյութազատիչ գործունեությունը, հյութարտադրության կարգավորումը: Լյարդի դերը մարսողության մեջ:	2				2	4
22.	Լյարդի ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Լեղու կազմն ու նշանակությունը, լեղարտադրության կարգավորումը:		2			1	3
23.	Մարսողությունը բարակ և հաստ աղիներում: Ներծծում: Ենթաստամոքսային գեղձի հյութի կազմն ու հատկությունները, հյութազատության կարգավորումը: Հաստ աղիքի հյութազատիչ ֆունկցիան: Հաստ աղիքի միկրոֆլորային նշանակությունը:	2				2	4
24.	Ներծծման մեխանիզմը: Տարբեր նյութերի ներծծման առանձնահատկությունները ստամոքսաղիքային ուղում:		2			2	4
Ընթացիկ ստուգում 1							2
Ընթացիկ ստուգում 2							2
Ամփոփիչ ստուգում							2
Ընդամենը							90